

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/1

7 փետրվարի 2017թ.

Քննարկվեց «Անանո» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.11.2016թ. թիվ 1010957 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.07.2016թ. թիվ 1010957 հանձնարարագրի համաձայն «Անանո» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.11.2016թ. թիվ 1010957 ակտը, որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 120.769.759 դրամ:

Նշվեց նաև, որ ընկերության կողմից 07.02.2017թ. ներկայացված դիմումով մասնավորապես հայտնվել է, որ անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել հավելյալ փաստաթղթեր, որոնք կնպաստեն գործի արդարացի քննության ու օբյեկտիվ որոշում կայացնելուն: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգմանն առնչվող փաստաթղթերի վերականգնման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ, ընկերության 07.02.2017թ. դիմումով ներկայացվել է միջնորդություն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.11.2016թ. թիվ 1010957 ակտի դեմ բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ընկերության 07.02.2017թ. դիմումով բերված միջնորդությունը, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Անանո» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**